

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2002թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1418.3 հազ. մարդ, որից 90.4 %-ը կամ 1282.7 հազ. մարդ զբաղված է եղել տնտեսության մեջ, իսկ 9.6%-ը կամ 135.6 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար)՝ չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2002թ. օգոստոսի վերջի դրությամբ, ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման է կանգնած եղել 157.9 հազ. աշխատանք փնտրող, որից 99.2%-ը կամ 156.7 հազ.-ը չզբաղվածներ են: Գործազուրկի կարգավիճակ ստացել է չզբաղվածների 84.5%-ը կամ 132.4 հազ.մարդ:

2002թ. օգոստոսին ծառայության կողմից հաշվառման է վերցվել 1.4 հազ. մարդ, որից 1.0 հազ.-ը կամ 71.4%-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 2.2 հազ.մարդ,որից 27.3%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2002թ. օգոստոսին¹

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		նրանցից գործազուրկները	
	ընդամենը, հազ. մարդ	%- ով՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ	ընդամենը, հազ. մարդ	%-ով՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ
Ընդամենը ՀՀ	157.9	94.0	132.4	92.0
Արագածոտն	2.2	100.0	1.5	100.0
Արարատ	6.9	89.6	5.4	87.1
Արմավիր	8.5	84.2	6.1	80.3
Գեղարքունիք	8.7	92.6	6.4	95.5
Լոռի	25.6	102.8	21.4	100.5
Կոտայք	9.7	79.5	7.4	76.3
Շիրակ	33.8	100.9	28.9	98.3
Սյունիք	16.4	101.9	13.7	100.0
Վայոց ձոր	2.1	105.0	1.6	94.1
Տավուշ	4.6	93.9	3.9	90.7
ք.Երևան	39.4	87.6	36.1	86.4

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 66.6%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2001թ. օգոստոսի նկատմամբ աճել է 0.9%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2002թ. օգոստոսի վերջին կազմել է 949 մարդ, այդ թվում՝ 79.7%-ը կամ 756-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

2002թ. օգոստոսին «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել է 577 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 165 չզբաղված մարդ:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2002թ. օգոստոսին կազմել է 6.6 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3194 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել է 11.8 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1469 դրամ: Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2002թ. օգոստոսին կազմել է 9.4% և 2002թ. հուլիսի համեմատությամբ մնացել է նույն մակարդակին, իսկ 2001թ. օգոստոսի նկատմամբ նվազել է 0.7%-ով:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: